ՆԱԻԹԱՐԴԻԻՆԱԲԵՐԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՆԵՐԿԱՅ ՎԻՃԱԿԸ

ՖՐԻԴՈՆ ՄԱՐԴԱՆԵԱՆԻ

IV

Մեր անցեալ նամակներից՝ ընթերցողը արդէն գիտէ, որ Բաքվի կերոսինագործատէրերի միութեան պայմանագրերը պատրաստ էին։ Թէև նրանք բաժանուած են երկու բանակի, բայց այդ ոչնչով ընդհանուր միութեան գործին չէ վնասում, որովհետև այդ երկու բանակներն ևս պիտի ունենան պայմանագիր, որով փոխադարձաբար պիտի պարտաւորուին երբէք իրար դէմ չմրցել, այլ ընդհակառակը միշտ ըստ կարելոյն չափ պիտի աշխատեն նպաստել ընդհանուր գործի յաջողութեան։ Այդ պայմանագիրը, ինչպէս լսում ենք, արդէն պատրաստ է և վերջնականապէս խմբագրելու համար այս օրերս պիտի ուղարկուի Պետերբուրգ։ Պայմանագիրը քննելու ժամանակ ներկայ լինելու կերոսինագործատէրերի կողմից ընտրուած են պ. պ. Ադ. Մանթաշեան և Գ. Լիանոզով։

Ուրեմն միութեան հակառակ ոչինչ չկար և ըստ երևոյթին ամեն ինչ կարգին էր, մնում էր միմիայն պայմանագրերին գործնականութիւն տալ և միութիւնը իրագործած համարել։ Որքան չուսեր ունէին դրած այդ միութեան վրայ և փայլուն ապագայ էին սպասում նրանից մեր վաճառականները։ Ա՜ւաղ... Անցեալ դեկտեմբերի 14-ին Նոբել ֆիրմի գլխաւոր կառավարիչ՝ պ. Բելիամինը Պետերբուրգից հետևեալ հեռագիրը ուղարկեց միութեան առաջին խումբի կարգադրիչ մասնաժողովի անդամներին. «Մինիստրութիւնը վճռական կերպով մերժեց Բաքվից մինչև Բաթում նաւթային արդիւնքների համար ֆրախտի պակասացնելը։ Եւրոպական վաճառականներում տիրող գնից ապօրինաւ կուրսերով՝ Բաթում իւրաքարչիւր փութի համար ստացւում է միմիայն 15 կոպ., այսինքն աւելի պակաս քան ֆրախտը։ Այդ պատճառով Նոբել ընկերութիւնը այլ ևս արտասահմանում կերոսին վաճառելը իր համար ձեռնտու չէ գտնում։ Հոկտեմբերի

26-ին կազմած պայմանագիրը անիրագործելի է դառնում և ընդհանուր ժողովին մնում է միմիայն նրան քանդել»։

Յարգելի ընթերցող, ինչպէս էք կարծում, տարօրինակ քայլ չէ արդեօք այդ պ. Բելիամինի կողմից, այն պարոնի, որը առաջինն է եղել միութեան գաղափարը և նորա կարևորութիւնը մեր կերոսինագործատէրերին քարոզողներից, որը միութիւն ստեղծելու համար աշխատում էր աւելի քան տասը տարի և ոչ մի միջոց չէր խնայում։ Ինչպէս տեսնում էք միութիւն ստեղծելու համար շատ մարդիկ են աշխատել և շատ պրոէկտներ առաջակէլ, սակայն սրանցից ոչ մէկը յաջողութիւն չէ ունեցել։ Վերջապէս հազիւ կառավարութեան աջակցութեամբ այդ փայփայած միտքը գործնականութիւն ստացաւ, այսօր այդ նոյն իսկ պ. Բելիամինը, որը կերոսինագործատէրերի ազատելը ներկայ վիճակից միմիայն միութեան մէջ էր տեսնում, յանկարծակի մի այդպիսի հեռագիր է ուղարկում կերոսինագործատէրերին։

Մեր գրիչը շատ թոյլ է, նա չի կարող արտայայտել այն սարսափելի և ծանր տպաւորութիւնը, որ գործեց այդ հեռագիրը մեր կերոսինագործատէրերի վրայ։ Նրանք կատարելապէս չմնել, գլուխները կորցրել էին, չգիտէին ինչ անել։ Նրանց թւաց թէ այն լուսատու աստղը՝ կերոսինագործատէրերի միութեան ստեղծելը, որը երևացել էր Բագաւ հորիզոնում, կարծես մօտ է խաւարելու։ Մութ և խաւար ամպը կարծես ուզում է ծածկել նորան, թողնել այդ խեղճերին դարձեալ մութ անապատում լուսահատ դրութեան մէջ և մատնելով նրանց ճակատագրի ծանր հարուածներին։

Արդեօք ինչ է նշանակում տասնեակ տարիներ մի սկզբունք պաշտել, փայփայել և յանկարծ մի բոպէի մէջ ամեն ինչ խորտակել՝ մոռանալով նոյն իսկ իր կրած նեղութիւնները։ Այո, բոլորովին անսպասելի էր Պետերբուրգից մի այդպիսի հեռագիր, մանաւանդ պ. Բելիամինի ստորագրութեամբ։

Այժմ փորձենք որոնել այդ հակասութեան պատճառները.

Ընթերցողին արդէն յայտնի է, որ միութեան պայմանագիրը մշակած և խմբագրած է այդ նոյն Բելիամինի անմիջական մասնակցութեամբ։ Այնտեղ մտցրած են այնպիսի յօդուածներ, որոնք խօսում են միմիայն յոգուտ Նոբելի և Ռոտշիլդի և որոնց տեղ տալը ոչ մէկը միջակ կամ փոքր գործարանատէրերից ի սրտէ չէր ցանկանայ։ Բայց և այնպէս, նրանք ստիպված էին ստորագրել մի այդպիսի պայմանագիր, որովհետև առանց Նոբելի և Ռոդշիլդի համաձայնութեան միութիւնը իր նպատակին հասնել չէ կարող։

Մենք չենք կասկածում, որ Նոբելի և Ռոդշիլդի պահանջմամբ են պայմանագրի մէջ մտցրած այն յօդուածները, որոնց հիման վրայ՝ նախ մեր

կերոսինի վաճառման համար արտասահմանում ընտրում են առևտրական գործակալներ միմիայն այն կերոսինագործատէրերը, որոնք արտասահմանում ունին արդէն կազմակերպ·ւած առևտուր, և երկրորդ՝ առևտրական գործակալներին տրւում է իրաւունք գործակալի պաշտօնից հեռացնելուց ետոյ, միութիւնից անկախ կերոսինի առևտուր ունենալ արտասահմանում, որովհետև Նոբել ի Բոդիլտ համոզւած էին, որ իրանք կընտրէին առևտրական գործակալներ հէնց այն պատճառով, որ բացի նրանցից չունինք ուրիշ ֆիրմա, որը լաւ կազմակերպւած առևտուր ունենայ արտասահմանում։ Մենք չենք լիշում Բագաւ Ստանդարտի և պ. Ադ. Մանթաշեանի մասին, որովհետև դրանք դեռ նոր են ճանաչւում արտասահմանեան վաճառանոցներում։ Իսկ ինչ վերաբերում է գործակալներին տրւած իրաւունքներին, այդ մասին մենք մեր կարծիքը արդէն լայտնել ենք մեր նախորդ նամակում։ Այժմ էլ կրկնում ենք, որ մի փառաւոր օր Նոբել և Բոտչիլդը այդ իրաւունքից կոգտւին, որովհետև մարդիկ ի բնէ ագահ են ստեղծւած և ոչնչով նրանք երբէք չեն բաւականանայ։ Փողը մի այնպիսի հրապուրիչ ոյժ ունի, որի առաջ երբեմն խոնարհւում են մինչև անդամ ամենաազնիւ, վսեմ և մաքուր գաղափարների տէր մարդիկ՝ գլորելով անդունդի մէջ մի ժամանակ իրանց սիրած, փայփայած և պաշտած գաղափարները։ Ուր մնաց որ մի առևտրական ֆիրմա, որի ամբողջ էութիւնը, խելքը ու միտքը, միմիայն շատ փող վաստակելու միջոցներ որոնելուն է նւիրւած։

Արդ եթէ միութեան պայմանագիրը Նոբել ֆիրմի անմիջական մասնակցութեամբ է մշակւած և խմբագրւած, ուրեմն ինչն է ստիպում Նոբելին մի այդպիսի հեռագիր ուղարկել, որը՝ ճշմարիտն ասած՝ կրիտիկալի չէ դիմանում։

Նախ պէտք է ասենք, որ ֆրախտի պակասցնելը դեռ հիմք չէ կազմում միութեան համար, որովհետև միութիւնը կազմւում է ոչ թէ ֆրախտի պակասցնելու համար, այլ արտասահմանեան առևտուրը համակերպելու և բարելաւելու համար է կազմւում։ Մենք չենք ուրանում, որ ֆրախտի պակասացնելը ներկայ պայմաններում շատ և շատ ցանկալի և կարևոր է, որպէս ամենաուժեղ զէնքերից մէկը գործը աւելի շուտ կամակերպելու համար, բայց եթէ կառավարութիւնը չբարեհաճի թոյլատրել այդ, միթէ դրա համար հարկաւոր է քանդել այն միութիւնը, որի ստեղծելը այդքան դժւարութիւններ պատճառել մեր կերոսինագործատէրերին վերջին տասը տարւայ ընթացքում։ Երկրորդ՝ միութեան ապագայ գործունէութեան անշահաւէտութեան մասին խօսք չէ կարող լինել, մանաւանդ այն ժամանակ, երբ մեր վաղեմի թշնամիների՝ ամերիկացիների հետ համերաշխութեամբ բաժանած կը լինենք եւրոպական վաճառանոցները, որի յաջողեցնելը, ի դէպս է ասել, ինքը Նոբել ֆիրման էր յանձն առել։ Հէնց

հարցն էլ անշահաւէտը շահաւէտ դարձնելու մէջն է կայանում։ Թէ ներկայումս արտասահմանեան առևտուրը բացի վնասից ոչինչ մեզ չէ տալիս, այդ ամբողջ աշխարհին լայտնի է, ուրեմն լիշեցնելու կարիք չկայ։ Բայց չպէտք է մոռանալ այն հին ճշմարտութիւնը, թէ ուր միութիւն, համերաշխութիւն կայ, լինի սա հասարակական գործ, առևտրական ձեռնարկութիւն և այլն, այնտեղ գործը միշտ արդիւնաւէտ կը լինի։ Ուրեմն եթէ ներկայումս արտասահմանեան առևտուրը անշահաւէտ է, ապագայում, այն էլ շատ մօտիկ ապագայում, եթէ միութիւնը օրինաւոր կերպարանք ստանալ և սկսի իր գործունէութիւնը, կարող է լինել վերին աստիճանի շահաւէտ։

Ապա ուրեմն ինչպիսի շահաւէտ կոմբինացիաներ նա ունկատի ունի։ Անկեղծ խոստովանում ենք թէև այդ հարցը մեր մէջ ծագեց, սակայն պատասխանել դժուարանում էինք։ Ուստի մենք դիմեցինք գործին աւելի տեղեակ և հմուտ մարդկանց, որոնք այդ քայլը ահա թէ ինչպէս են բացատրում։

Հարաւային Ռուսաստանում քարէ ածուխի սաստիկ պակասութիւն է զգացւում։ Այդ բանին օգնելու համար առաջարկւած բազմաթիւ միջոցներից՝ կառավարութիւնը գլխաւորապէս կանգ է առել երկրին այդ մասին նաւթամնացորդով ժամակարարել ու առաջարկի վրայ՝ պակասցնելով այդ ապրանքի համար երկաթուղիների ֆրախտը։ Այդ անել ոչ մէկը մեր կերոսինագործատէրերից, բացի Նոբելից, չէ կարող, որովհետև Անդրկովկասեան երկաթուղու, Սև ծովի հիւսիսային նաւահանգստների բոլոր պահեստները և այն միակ երեք շոգենաւերը, որոնք լատկացրած են միմիայն նաւթամնացորդ արտահանելու համար Բաթումից Սև ծովի հիւսիսային նաւահանգիստները կապալով են գտնում Նոբելի ձեռքին։ Ահա թէ ինչպիսի անվերջ օգուտների աշխարհ է բացւել Նոբելի առաջ։ Ահա թէ ինչն է ստիպում Նոբելին մի այդպիսի հեռագիր ուղարկել Պետերբուրգից։

Եւ միթէ հարկաւոր է միութիւնը քանդել լոկ նորա համար, որ ներկայ հանգամանքներում Նոբելին ձեռնտու չէ միութեան հետ գործել։ Չէ որ այդ բանը ներքին առևտրին է վերաբերում և ոչ արտասահմանեանին։ Բայց և այնպէս միութեան պայմանագրի քանդելը այնքան էլ հեշտ չէ, ինչպէս կարծում է Նոբել ֆիրման։

Այդ բոլորը պարզելուց լետոյ կերոսինագործատէրերի կատաղութեան չափ ու սահման չկար։ Նրանք հէնց հեռագիր ստանալու միւս օրը, դեկտեմբերի 15-ին մի ընդհանուր ժողով հրաւիրեցին։ Ժողովում երկար խօսելուց և Նոբելի հասցէով անթիւ հայհոյանքներ թափելուց լետոյ՝ որոշեցին հեռագիր ուղարկել Ֆինանսների մինիստրին։ Այդ հեռագրի համառօտ բովանդակութիւնը աւելորդ չենք համարում առաջ բերել։ Հեռագրի

մէջ նախ յայտնում են, թէ ինչ սարսափելի ներգործութիւն ունեցաւ Բելիամինի հեռագիրը և ինչից դրդուած նրանք խնդրել են ֆրախտի պակասացնելը, և ապա ասում են. «Նաւթարդիւնաբերութիւնը մինչև այժմ չդիմելով ոչ մի կողմնակի հովանաւորութեան և խնամատարութեան՝ ինքն իր մէջ էր գտնում ոյժ՝ իր գոյութիւնը պահպանելու և իր զարգացման համար։ Զծանրաբեռնելով պետական բիւջետը և չպահանջելով կառավարութիւնից առանձին հոգատարութիւն, նա միշտ տուել է պետական գանձարանին մեծամեծ օգուտներ, միևնոյն ժամանակ ինքը գտնուել է մի շարք այնպիսի ծանր հանգամանքների մէջ, որոնք արգելում ու նեղդրութեան մէջ են դնում նրա զարգացումը։ Այդպիսի հանգամանքներն են՝ ակցեղ սահմանելը՝ սկզբում 40 կոպ., յետոյ 60 կոպ., կերասինագործատէրերին պատկանեալ վագոնների ստիպողական կերպով առնելը՝ տալով նրանց բոլորովին աղատ գներ, և վերջապէս մի այնպիսի տարիֆ նշանակելը, որը չորս անգամ աւել է իւրաքանչիւր փութի արտահանորթեան իսկական արժողութիւնից և նոյն իսկ ապրանքի վաճառման գնից։ Այդպիսի անձեռնտու հանգամանքները մի կողմից և ամերիկացիների մրցումն միւս կողմից մեզ հասցրել են արդէն անդունդի ծայրին։ Ահա այդ պատճառով մենք ներկայ թւականի մարտ ամսին նաւթարդիւնաբերողների ժողովի խորհրդի միջոցով դիմել էինք ֆինանսների մինիստրութեան՝ ֆրախտի պակասեցնելու համար։ Մինիստրութիւնը այդ պահանջը բոլորովին իրաւացի գտնելով՝ յայտնեց թէ ֆրախտի պակասեցնելը ներկայ հանգամանքներում, երբ արդիւնաբերողները բաժան-բաժան են գործում, միտք չունի՝ ուստի ցանկալի է, որ նաւթարդիւնաբերողները միանալով՝ կազմակերպեն արտասահմանեան առևտուրը և ապա կը պակասեցնի ֆրախտը, ապա թէ ոչ այդ անելը կը նպաստի մեր կերոսինը աւելի էժան գներով վաճառելուն։ Իսկ այժմ երբ ընկերութիւնը կազմած է, մենք կրկին անդամ դիմում ենք ձերդ բարձ գերազանցութեան՝ խնդրելով շարունակել ձեր բարձր հովանաւորութեան տակ սկած և իրագործած գործը՝ գոնէ ժամանակաւորապէս պակասանցելով ֆրախտը։ Հարկաւոր ենք համարում աւելացնել մինիստրութեան մէջ տեղի ունեցած ենթադրութիւնը՝ արհեստական կերպով պակասցնել արտահանելիք կերոսինի քանակութիւնը՝ յատկացնելով վագոնների մի մասը նաւթամնացորդը արտահանելու դէպի Սև ծովի հիւսիսային նաւահանգիստը, մենք նախ հակառակ ենք գտնում միութեան նախագծած նպատակներին և երկրորդ՝ մի այդպիսի ձեռնարկութիւն օգտաւէտ կը լինի ոչ թէ ամբողջ արդիւնաբերութեան, այլ միակ մի ֆիրմայի համար, որի ձեռքին է գտնուում փոխադրական միջոցները։

Այդ միևնոյն ժողովում միաձայն վճռեցին միութիւնը կայացած և պարտաւորեցուցիչ համարել այն բոլորի համար, որոնք արդէն ստորագրել են պայմանագիրը։ Միութեան պայմանագրին գործնականութիւն պիտի տրի

նաև այն դէպքում, եթէ մինիստրութիւնից ֆրախտի պակասցնելու մասին իսկապէս բացասական պատասխան ստացվի։ Սակայն այդ մասին որոշ դեռ ոչինչ յայտնի չէ, չուսահատելու կարիք չկայ, մանաւանդ որ Պետերբուրգից մասնաւոր կերպով ստացած տեղեկութիւնները բոլորովին հերքում են պ. Բելիամինի հաղորդած լուրը։

Մեր նոխորդ նամակում մենք մոռացել էինք հաղորդել, որ կերոսինագործատէրերի 1) խմբի կարգադրիչ մասնաժողովի անդամներից երեքը արդէն ընտրած էին Պետերբուրգի ժողովներում. պ.պ. Շիրաեւ, Ղուկասեան և Յովնանեան, իսկ մնացեալ երկուսը ընտրվեցան այստեղ՝ Բագու՝ 18-ն դեկտեմբերի ժողովին։ Ընտրեցան պ. պ. Դ. Մ. Արաֆելեան և Մուսա Նագիեւ։ Ընտրութիւնը վերջացնելուց յետոյ՝ ժողովի նախագահ պ. Ղուկասեանը ժողովին կարդաց պ. Բելիամինից ստացած հետեւեալ հեռագիրը. «Արտասահմանում այսուհետև կերոսին վաճառելու կարելիութիւնը կախված չէ Նոբել ընկերութիւնից, որը ոչ գներն է որոշում, ոչ կուրսը և ոչ էլ ֆրախտի չափը։ Մինչև որ համաձայն դիպարտամենտի պահանջման երկու խմբերի փոխադարձ պայմանագրի ծրագիրը չի ներկայացնվի և ընդունվի, մինչև որ ֆրախտը այն աստիճանի չի պակասցնվի, որպէս զի մեր կերոսինը առանց վնասի կարելի լինի արտասահմանում վաճառել, ընկերութիւնը միութեան կերոսինի ճառման համար ոչ մի միջոց չէ կարող ձեռնարկել։ Ուստի աշխատեցէք կարելոյն չափ շուտով ոեպարտամենտի պահանջած տեղեկութիւնները հասցնել»։

Թէև հեռագիրը կարդացելու ժամանակ դեռ դեպարտամենտից ոչինչ չէր ստացած, բայց այնու ամենայնիւ ժողովը յանձնեց միութեան կարգադրիչ մասնաժողովի անդամներին պայմանագրել 1 և 2-րդ խմբ։ ների փոխադարձ յարաբերութիւնները և ներկայացնել հետեւեալ ժողովին ի քննութիւն։ Ժողովում որոշվեցան նաև մի քանի հերթական հարցեր, որոնց թվելը աւելորդ ենք համարում. կասենք միմիայն, որ վճռեցին փետրվարի 1-ից անպատճառ սկսել միութեան կերոսինի վաճառումը արտասահմանում, ուստի մինչև այդ օրը պէտք է ամեն ինչ պատրաստել, այնպէս որ ոչինչ արգելք չհանդիսանայ գործի սկսելուն։

Այն հեռագիրը, որի մասին պ. Բելիամինը ակնարկում է իւր վերջին հեռագրում, ստացվեց Բագու, մէկը պ. Կաւալեւսկու ստորագրութեամբ, իսկ միւսը երկաթուղային գործերի դեպարտամենտի դիրեկտոր պ. Մակսիմովի։ Առաջինի մէջ առաջարկում է շուտով ներկայացնել երկու խմբերի փոխադարձ յարաբերութիւնների ծրագիրը։ Դժբաղդաբար Նոբել ընկերութիւնը այս անգամ ևս գործին դանդաղութիւն պատճառեց։ Նա իւրաքանչիւր կառավարիչ պ. Խագելինին արգելեց ժողովներին մասնակցել և պատուիրեց շուտով ուղևորվել դէպի Պետերբուրգ։ Այսօր թէև պայմանագիրը պատրաստ է, սակայն ստորագրող 1-ին խումբի կողմից չկայ,

որովհետև 26-ին հոկտեմբերի կազմած պայմանագրին համաձայն այդպիսի պայմանագրեր պիտի ստորագրին միմիայն առևտրական գործակալները։ Երկրորդ հեռագրի մէջ պ. Մակսիմովը մեր կերոսինագործատէրերին հարց է առաջարկում՝ «ինչպէս էք ցանկանում ֆրախտի պակասեցնելը, որպէս արտօնութիւն միմիայն միութեան, թէ որպէս մի ընդհանուր միջոց բոլոր արտահանողների համար, մինչև անգամ և Նոբելի համար այն դէպքում, եթէ նա միութիւնից հեռանայ», և ապա աւելացնում, «թէ առաջին ձևը անկարելի է, որպէս հակառակ Ռուսաստանի երկաթուղիների օրէնքներին մի բան»։ Այդ հեռագրին մեր կերոսինագործատէրերը այսպէս պատասխանեցին. «Ցանկալի էր, որ այդ արտօնութիւնը լինէր միմիայն միութեան, իսկ եթէ այդ չի կարելի, գոնէ որպէս ընդհանուր միջոց»։ Ապա լիշեցնում են այն ահագին տուգանքների մասին, որ պարտաւոր է վճարել Նոբել Ֆիրման համաձայն 26-ն հոկտեմբերի կազմած պայմանագրին, եթէ նա հեռանայ այժմ միութիւնից։

Մի քանի օրից լետոյ պ. Կաւալեւսկին հեռագրով լայտնեց, թէ կերոսինագործատէրերի վերջին խնդիրքը ընդունեց, և արդէն լանձնաժողով է կազմել փոփոխական (боевой) տարիֆ սահմանելու հարցը քննելու համար։ Պետերբուրգից ստացած ժամանաւոր տեղեկութիւններից երևում է որ մասնաժողովը սկզբունքով որոշել է այնպիսի փոփոխական տարիֆ սահմանել, որով լամենայն դէպս Բագու իւրաքանչիւր փութ կերոսինի համար ստացւի գոնէ իւր արժողութիւնը։ Անհամաձայնութիւնը միմիայն նորա մէջ է արդեօք ինչպէս որոշել կերոսինի իսկական արժողութիւնը։ Մի քանիսը առաջարկում են 8,5 կոպ., իսկ միւսները 5 կոպ.։ Այդ հարցը այնքան էլ դժւար չէ որոշելը, հարկաւոր է միմիայն վերցնել միջին տարեկան գինը նաւթամնացորդի, իսկն և եթէ կը պարզւի իւրաքանչիւր փութ կերոսինի գինը։ Այդպէս դիցուք տարեկան միջին գինը նաւթի է 2,75 կ. իսկ նաւթամնացորդինը 3 [1]։ Իւրաքանչիւր $3^1/_4$ փութից ստացւում է 1 փութ կերոսին և $1^1/_2$ փ. նաւթամնացորդ։ Ուրեմն իւրաքանչիւր փութ կերոսինը կարժենայ, աւելացնելով դրանց վրայ և տեղական և մաքրելու ծախսերը, որը լամենայն դէպս $4^1/_2$ կոպէկից պակաս չէ, (2,75×3,25)+4,5)—(3×1,5)=8,95 կ. [2]) ուրեմն կերոսինի գինը նշանակել 5 կոպ. բոլորովին հիմք չունի։ Հէնց այդ պատճառով մեր կերոսինագործատէրերը արդէն հեռագրել են, եթէ կերոսինի արժողութիւնը կորոշւի 5 կոպ. այն ժա-

---

[1]) Մենք այդ գծերը առաջ բերելով ի նկատի ունինք 1894 թ. համար եղած գաճառքները։

[2]) Հաշւապահական տեսակէտով կերոսինի գինը այդպէս չէ որոշւում, մենք այդ մասին ունինք առաջարկած ձև „Счетоводство“ ամսագրի 1892 թ. № 11։

մանակ փոփոխական տարիք մեզ հարկաւոր չէ, աւելի լաւ է 7 կոպ. տարիքից պակասցնել, ինչպէս խոստացել էին։ Փոփոխական տարիքի միտքը պարզելու համար մենք աւելորդ չենք համարում օրինակով խօսել։ Իւրաքանչիւր ամիս հրատարակելու է տարիքի չափը չարմարուելով արտասահմանում տիրող միջին գների հետ։ Բայց յամենայն դէպս արտահանողը ապրանք ուղարկելուց պիտի վճարի 19 կոպ. իւրաքանչիւր փութի համար, իսկ եթէ կերոսինի արժողութիւնը և նրան կցած ծախքերը դուրս գալով՝ ֆրախտի համար 19 կոպ. չմաքրուեց, այն ժամանակ երկաթուղու վարչութիւնը պարտաւոր է վերադարձնել արտահանողին զանազանութիւնը։ Այդպէս եթէ դիցուք Բաթում իւրաքանչիւր փութի համար ստացում է 20 կոպ., ուրեմն կերոսինի արժողութիւնը 8,5 կոպ. դրանից դուրս գալով մնում է 11,5 կոպ. ուրեմն երկաթուղու վարչութիւնը պարտաւոր է վերադարձնել արտահանողին իւրաքանչիւր փութի համար 7,5 կոպէկ։ Այդպէս, ուրեմն փոփոխական ֆրախտի չափը maximum որոշած է 19 կոպ., իսկ minimum — անորոշ։

Այս երկու օրերս Բագու պ. Կաւալեւսկուց ստացած հեռագրից երեւում է, որ ֆինանսների մինիստրը սկզբունքով ընդունել է փոփոխական (боевой) տարիքի նշանակելը Անդրկովկասեան երկաթուղու վրայ նաւթարդիւնքների համար։

Մեր յաջորդ նամակը կը նուիրենք կերոսինի արտասահմանեան առևտրի ընդհանուր տեսութեան և Standard oil Company գործունէութեանը սկսեալ 1888 թւականից։